ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 26.04.2019թ.
ժամը 15 ⁰⁰

Մասնակցում էին՝
գնահատող հանձնաժողովի նախագահ՝ (ԳԱՊ)
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
Գնահատողներ՝
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ավտոմոբիլային ծառայության հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման գնման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
- ՀՀ ՋՈՒ ՍՎ ԱՏ ծառայության շահագործման և պլանավորման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Դ. Սերոբյան,
Գնումները համակարգող՝
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետի տեղակալ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Բաղրամյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության, առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Բաղրամյան)

1.1 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման պահանջներին մասնակիցների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են բաց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.2 Որակավորման փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 26.04.2019թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահաող հանձնաժողովը որոշեց **«Դարֆ» ՍՊԸ**-ն՝ 1, 5, 6 և 8-րդ չափաբաժինների մասով և **«Արպանիվ» ՍՊԸ** -ն՝ 2, 3, 4, 7, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18 և 19-րդ չափաբաժինների մասով ճանանչել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո նրանց պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Բաղրամյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Դ. Սերոբյան
Գնումները համակարգող՝	Ա. Բաղրամյան